

Ես հիմակ այս ձուն  
 Ուտեմ կըշտանամ,  
 Յետոյ գընա դուն  
 Իմացիր տեսնամ:  
 Մէյմ' ալ նայիս' մեծաւորն  
 Չելլէ չըգայ կամացուկ,  
 Յանկարծ բացաւ խըցին դուն  
 Ու ներս խոթեց իւր մօրուք:  
 « Ատ ինչ է քու բրածըգ,  
 Կանչեց վըրան դռալով:  
 Պատասխան տուր, յանցանքըգ  
 Կըրնաս ծածկել, ինչ կերպով »:  
 Ինչ ըսէր խեղճ ճըգնաւորը,  
 Բռնըւեցաւ, ճար չունէր:  
 Բաց էր մեղքն ու մեղաւորը,  
 Ուր պահուըտէր, ինչ ընէր:  
 « Հայր սուրբ գոչեց, — աչքէն ցառեց արցունքը, —  
 Մեղայ քեզի, թողութիւն տուր յանցանքիս.  
 Չգիտեմ ուսկից եկաւ ինձ այս փորձանքը.  
 Յայտնի բան է. չար սատանան խաբեց զիս »:  
 Սատանան անդին խըցին անկիւնէն  
 Ճըւաց ու ըսաւ, « Հերիք է հերիք.  
 « Ամօթ չէ՞ ձեզի որ ամէն առէն  
 « Չարութիւն կընէք ու զիս կըքըջրէք.  
 « Ես շիտակն ըսեմ, քեզմէ սովրեցայ,  
 « Եւ առջի անգամն էր որ հոս տեսայ  
 « Հաւկիթ եփելը ճըրագի վերայ »:  
 ԳՌԻԼՈՎ.

## ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

### Յ Ա Ն Գ Ա Ր Ա Ն

կ ա մ

### ԲԱՌԳԻՐԳ ՅԱՆԳԱՅ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ

ի մ'բ ա գ ր ե ա ց

Խ Ո Ր Է Ն Վ. Գ Ա Լ Ֆ Ա Յ Ե Ա Ն.

Մեր ազգին պէս ոտանաւոր գրուածքներ սիրող ազգի մը համար՝ յիրաւի զարմանալի  
 պակասութիւն մի էր մինչեւ ցայժմ ՅԱՆԳԱՅ ՀԱՅԿԱԶԵԱՆ մի չունենալը, որով տաղաչափք եւ բանա-  
 ստեղծք մեծ դիւրութիւն գտանէին իրենց տողերը գրելու, եւ իրենց հանճարը յանգ-  
 փնտռելու աշխատանքով չյօգնէր: — Ահա այսուհետեւ այս կարօտութիւնը լցուեցաւ, եւ  
 տաղաչափք ու լեզուագէտք այս նորատիպ դիւրատար ՅԱՆԳԱՅԻՆ մէջ կդառնեն մեր լե-  
 զուին ամէն բառերն ալ՝ յանգերուն կարգաւը շարուած:

Գինն է 1 ըուպլի 50 քօփ. արծ., որ է 30 ղուռուշ: